Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 9 (530) մայիս 17-31, 2023թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Պէտք է կանխել կենսական զիջումներ պարտադրող անձնատուական պայմանագրերի ընդունումը

ՀՅԴ Բիւրոյի յայտարարութիւնը

2023 թ. մայիսի 22-ի մամլոյ ասուլիսում ՀՀ վարչապետի պաշտօնը զբաղեցնող անձը անթաքոյց յայտարարեց Արցախը եւ Տաւուշի ու Արարատի մարզերի նախկին անկլաւները Ադրբեջանի տարածքային ամբողջականութեան մէջ ճանաչելու մասին, ինչը ՀՀ վարչախմբի կողմից հետեւողական կերպով իրականացուող հակապետական եւ հակազգային քաղաքականութեան հերթական դրսեւորում է:

Թուրք-ադրբեջանական տանդեմի հետ ձեռք ձեռքի տուած Հայաստանի այսօրուայ իշխանութիւնը ծրագրուած կերպով փորձում է կոտրել մեր ժողովրդի դիմադրութեան ոգին՝ անխուսափելի կործանման տանելով երկիրը:

Պարտութիւնների, կորուստների, նուաստացումների ընթացքը թեւակոխում է նոր փուլ: Այս իշխանութեան պաշտօնավարման ամէն մի օրն ու ժամը այլեւս գոյութենական սպառնալիք է:

Սակայն ամէն ինչ դեռ կորսուած չէ, վիճակը հնարաւոր է շտկել, մենք ունենք այդ ներուժը: Ազգային ուժերի ջանքերի մէկտեղմամբ անհրաժեշտ է օր առաջ վերականգնել Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը եւ բեկում մտցնել վիճակի մէջ: Ուժեղ, արդար, արժանապատիւ Հայաստանն է գրաւականը մեր անվտանգութեան ու ապագայ յաջողութիւնների: Բայց նախ պէտք է կանխել կենսական զիջումներ պարտադրող անձնատուական (կապիտուլացիոն) նոր պայմանագրերի ընդունումը՝ բացառելով առանց ժողովրդի անմիջական մասնակցութեան որեւէ համաձայնութեան կայացում:

Հայաստանի որեւէ իշխանութեան որեւէ գործողութիւն, որը կասկածի տակ է դնում Արցախում անցկացուած հանրաքուէների արդիւնքները, Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնն ու դրա անքակտելի մասը կազմող անկախութեան հռչակագիրը, ի սկզբանէ առ ոչինչ են:

Մենք չենք հանդուրժելու հայ ազգի շահերը ոտնահարող պարտադրուող համաձայնութիւնները: Արժանապատիւ ու հայրենատէր բոլոր հայերը այս առումով անելիք ունեն: Մենք հաւատում ենք՝ միասին կարող ենք բեկել պատմութեան ընթացքը:

Հ.Յ.Դ. Բիւրո
23 Մայիս, 2023

Արցախը երբեք չի հրաժարվելու իր պայքարի անշեղ ուղուց

Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ 2023 թվականի մայիսի 22-ին ժամը 23:00-ին գումարվել է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստ՝ հրատապ հարցերի օրակարգով:

Օրակարգում Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ ներկայացված Արցախի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարությունն էր, որը միաձայն ընդունվել է: Խորհրդարանի պատգամավորները հանդես են եկել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ նույն օրը արված հայտարարությունների մասին դատապարտող ելույթներով:

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարություն

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի այսօրվա մամլո ասուլիսում կատարված հայտարարությունը, որի մեջ նա վերահաստատել է իր պատրաստակամությունը՝ Արցախը ներառելու Ադրբեջանի կազմում, խիստ վրդովմունք ու զայրույթ է առաջ բերել Արցախի Հանրապետությունում: Նիկոլ Փաշինյանը, փաստորեն, իր այդ հանձնառությամբ կոպտորեն խախտում է Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակագրի եւ Սահմանադրության ամրագրումներն Արցախի մասին, առանձնապես, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1992 թվականի հուլիսի 8-ի որոշման հրամայական հիմնադրույթն առ այն, որ «Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»:

Եվս մեկ անգամ վերահաստատում ենք, որ Արցախի կարգավիճակն արդեն իսկ որոշվել է 1991թ. դեկտեմբերի 10-ի համաժողովրդական կամարտահայտությամբ, եւ որեւէ իշխանություն իրավասու չէ այն բեկանելու:

Մեզ համար անընդունելի եւ առ ոչինչ են Արցախի Հանրապետության ինքնիշխանությունը, մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքը եւ դրա իրացման փաստն անտեսող Նիկոլ Փաշինյանի ցանկացած հայտարարություն ու դրա հիման վրա կազմված որեւէ փաստաթուղթ: Արցախը երբեք չի հրաժարվելու իր պայքարի անշեղ ուղուց:

Խորապես անհանգստացած առկա վտանգավոր իրողությամբ՝ Արցախի Հանրապետության Ազգային ժողովը կոչ է անում համայն հայությանը թույլ չտալ ՀՀ օրվա իշխանությունների կողմից հայոց հայրենիքի մի մասը՝ Արցախի Հանրապետությունը եւ ՀՀ ինքնիշխան տարածքները անկլավների անվան տակ Ադրբեջանին զիջելուն ուղղված աղետալի քայլերը, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու է հայկական պետականության կորստին:

Միաժամանակ դիմում ենք ՀՀ եւ ԱՀ նախկին ու գործող նախագահներին՝ կոչ անելով դատապարտել Նիկոլ Փաշինյանի՝ 2023թ. մայիսի 22-ի արած հայտարարությունները: Այլապես, ձեր լռությունը կդիտարկենք որպես Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ համաձայնության նշան:

Արցախի Հանրապետության
Ազգային ժողով
22 մայիսի, 2023թ.
ք. Ստեփանակերտ

Արցախում տոնել են Հայաստանի Առաջին Հանրապետության 105-ամյակը

Մայիսի 28-ին հայ ժողովուրդը նշում է Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման օրը: Այս տարի լրանում է Բագրատունյաց թագավորության եւ Կիլիկյան Հայաստանի անկումից ի վեր շուրջ 6 դար անց ստեղծված անկախ Հայաստանի վերածննդի 105-ամյակը:

Կարդացեք 3-րդ էջում

Կոռնիձորից Ստեփանակերտ. Պայքարի դրոշը վայր չի դրվելու

Մայիսի 20-ին Կոռնիձորում տեղի է ունեցել «Կամավորական շարժում» ՀԿ-ի նախաձեռնած բազմահազարանոց հանրահավաք, որին մասնակցում էին Հայաստանի տարբեր մարզերից եւ Երեւանից ժամանած քաղաքացիներ, քաղաքական-հասարակական գործիչներ:

Կարդացեք 4-րդ էջում

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդին Հանրապետության տոնի առիթով

Ամենայն հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն ուղերձ է հղել Հանրապետության տոնի առթիվ:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդին Հանրապետության տոնի առիթով:

Հայոց ցեղասպանությունը վերապրած մեր ժողովուրդը զորեղ հավատքով եւ արհավիրքների առջեւ չընկճվող ոգով կերտեց Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի մայիսյան հաղթանակները եւ առաջին հանրապետության հաստատումով լուսավոր նոր էջը բացեց իր պատմության:

Այսօր Հայաստանի անվտանգությանն ու սահմանամերձ տարածքների ապահովությանը, Արցախի ինքնիշխանությանը սպառնացող վտանգները, այլեւ ներազգային զարգացումները խորը մտահոգություններ են ստեղծել հայրենական անդաստանում, ողջ հայության կյանքում: Մեր հայրենիքի ու ժողովրդի դեմ իրականացվող քայլերին, ծավալապաշտական ձգտումներին դիմակայելու ուղին մեր միասնական պայքարն է, միակամությունն ու վճռականությունը:

Անկախության վերահաստատման եւ առաջին հանրապետության հռչակման հիշատակը տոնելով, սիրելի հայորդիներ, ոգեշնչվենք եւ գոտեպնդվենք երանելի մեր հայրերի ազատատենչ ոգով ու սխրագործություններով, մերժենք եւ հեռացնենք մեր կյանքից թշնամանքը, ատելությունն ու հակառակությունները եւ զորացնենք ազգային մեր միաբանությունը: Լցվենք վճռականությամբ՝ պաշտպանելու շրջափակման մեջ գտնվող Արցախի մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքը, անխաթար խաղաղությունն ու արժանապատիվ մեր կյանքը:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված օգնական լինի մեզ՝ հաղթահարելու մեր առջեւ ծառացած փորձությունները եւ հաստատելու բարօր ու լուսավոր գալիքը ազգի ու հայրենիքի: Թող Քրիստոս մեր Փրկչի ողորմությունն ու շնորհները հովանի լինեն համայն մեր ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս»:

Մենք Արցախի կողքին ենք. Հայաստանի Առաջին Հանրապետության 105-ամեակին առիթով արտասանուած հայրապետական պատգամ

Կիրակի, 28 Մայիս 2023-ին, Անթիլիասի Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ Ս. եւ Անմահ Պատարագի մատուցմամբ, Հանրապետական Մաղթանքի կատարումով եւ Սարդարապատի հերոսամարտին զոհուած հերոսներու հոգիներուն հոգեհանգստեան կարգով յիշատակուեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադրութեան 105 ամեակը՝ հանդիսապետութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոսին: Ապա, Հայաստանի անկախութեան եւ Վեհափառ Հայրապետին անուանակոչութեան տօներուն առիթով կոկիկ յայտագիր մը տեղի ունեցաւ Վեհարանի դահլիճին մէջ, ուր Նորին Ս. Օծութիւնը ներկայ ժողովուրդին փոխանցեց իր Հայրապետական ոգեշունչ պատգամը:

«Մայիս 28-ը սովորական տօն մը չէ. ան հոմանիշ է Հայաստանի անկախութեան եւ այդ անկախութիւնը պահպանելու, հզօրացնելու եւ ամրապնդելու մեր ազգին հաւաքական վճռակամութեան ու յանձնառութեան:

Ազատօրէն ապրելու ու մտածելու եւ ինքզինք կառավարելու, այլ խօսքով՝ ժողովուրդի մը ինքնորոշման իրաւունքը աստուածատուր իրաւունք է եւ մարդկային իրաւանց ամենէն էական սկզբունքներէն մէկը:

Մայիս 28-ի նշումը այսօր յիշեցում մըն է ու միաժամանակ կոչ իւրաքանչիւր հայուն՝ ամրօրէն կառչած մնալու Հայաստանի ու Արցախի գերիշխանութեան ու անվտանգութեան ամուր պահպանման: Յատկապէս Արցախը այսօր կը գտնուի ահաւոր վտանգներու սեմին: Վտանգուած է Արցախի ինքնորոշման իրաւունքը. վտանգուած է Արցախի մեր ժողովուրդին ապահովութիւնը:

Կ'ուզեմ բարձրագոյն աստիճանի կարեւորութեամբ շեշտել, թէ՛ շրջանէն ներս ստեղծուած աշխարհաքաղաքական ոչ նպաստաւոր պայմաններուն մէջ, մենք իրաւունք չունինք Արցախը լքելու, պարզապէս ըսելով,

- թէ Հայաստանը պատրաստ է ճանչնալու Ազրպէյճանի հողային ամբողջականութիւնը.
- թէ Արցախը եւ Պաքուն թող իրարու հետ բանակցին.
- թէ Հայաստան պետական շահեր միայն կը հետապնդէ.
- թէ շրջանէն ներս համապարփակ խաղաղութեան հաստատումը զիջումներ կ'ենթադրէ.
- թէ Հայաստանի տնտեսական շահերը կը պահանջեն, որ ան խաղաղ գոյակցութիւն հաստատէ իր անմիջական դրացիներուն, եւ մասնաւորաբար Թուրքիոյ եւ Ազրպէյճանի հետ:

Կ'անդրադառնա՞նք արդեօք, որ ազգային շահերուն եւ պետական շահերուն միջեւ բաժանման գիծեր հաստատելը խոտոր կը համեմատի մեր պատմութեան, մեր ազգին ինքնահասկացողութեան, մեր գերագոյն եւ ընդհանրական իտէալներու իրագործման: Ազգի ու պետութեան շահերը հարկ է դիտել մէկ ամբողջութեան ծիրէն ներս, որպէս զիրար հզօրացնող ու պայմանաւորող տարածքները մեր հաւաքական պայքարին:

Կ'անդրադառնա՞նք արդեօք, որ հետզհետէ

մեր ազգի կեանքէն ներս՝ Հայաստանի, Արցախի թէ Սփիւռքի մէջ, նոր ճեղքեր կը յառաջանան. փոխանակ համախմբուելու, իրարմէ կը հեռանանք, փոխանակ ի խնդիր Հայաստանի ու Արցախի հզօրացման փոխադարձ հասկացողութեան եզրեր որոնելու, զիրար կ'ամբաստանենք:

Անկախութեան համար պայքարը նուիրական է: Անկախութեան ի խնդիր պայքարող Արցախի մեր ժողովուրդին հետ ենք: Սա պահուն, Անթիլիասի Մայրավանքէն կոչ կ'ուղղենք աշխարհացրիւ մեր ժողովուրդի զաւակներուն Արցախի կողքին ըլլալու: Եւ Արցախի ժողովուրդին կ'ըսենք՝ վերանորոգ հաւատքով ու ամուր կամքով շարունակեցէ՛ք ձեր պայքարը յանուն անկախութեան ու արդարութեան:

Ա՛յս է պատգամը Մայիս 28-ին»:

Ազգային ուժերու համախմբումով կարող ենք բեկանել պատմութեան ընթացքը

ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանի ելույթը պետականության վերականգնման 105-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ.

«Սիրելի ժողովուրդ,

Մայիս 28-ով կերտուած Հայաստանի Հանրապետութիւնը Ցեղասպանութեան արհաւիրքէն ետք հայոց հրաշափառ յարութիւնն էր: Մեր նորագոյն պատմութեան մեծագոյն յաղթանակն է Մայիս 28ը, որմով ապահովուեցան մեր ժողովուրդի գոյատեւումը եւ աշխարհի քարտէսին վերադարձած իր անկախ հայրենիքին մէջ ապրելու եւ զարգանալու հնարաւորութիւնը:

Օրհասական այդ օրերուն հայ ժողովուրդը կարողացաւ զարթեցնել իր մէջ այն ուժականութիւնը, որ խիզախ եւ ներշնչող հայրենակերտ ղեկավարներու առաջնորդութեամբ հայութիւնը վերածեց երկաթեայ բռունցքի:

Եւ տեղի ունեցաւ հրաշքը, բռնցքուած ժողովուրդը ետ մղեց թրքական բանակը եւ կերտեց հայկական առաջին հանրապետութիւնը:

Դաշնակցութիւնը, ստանձնելով երկրի ղեկը, լծուեցաւ պետականութիւնը կազմակերպելու, յառաջադիմական հիմքեր հաստատելու եւ հայացնելու գործին: Անձեւ քաոսէն կերտեց արդիական կարգեր, հասաւ ցեղասպանութենէն ճողոպրած մնացորդացի կարիքներուն, հաստատեց հայեցի կրթութեան համակարգ եւ համալսարան, կարեւորեց հայ կանանց դերակատարութիւնը եւ 1919ին նոյնիսկ հռչակեց միացեալ Հայաստանի տեսլականի իրականացման գործընթացը:

Այսօր ալ հայրենիքը ճգնաժամի մէջ է. բայց երբեմնի հայրենանուէր իշխանութեան փոխարէն ունինք պարտուողական, յանձնուողական եւ իր էութենէն դատարկուած պետական ղեկավարութիւն. 1918ի առաջնորդները նուիրումով եւ անսասան հաւատքով տոգորուած պատասխանատու անձինք էին, որոնք գերագոյն զոհողութիւններու գնով անհնարինը հնարաւոր կը դարձնէին. այսօր ալ լուծումը նոյնն է՝ մենք պարտաւոր ենք հաւատալ մեր ուժերուն, յաղթահարել հիասթափութիւնները եւ մերժել մեզ պարտադրուած կեղծ արժէքներն ու օրակարգերը:

Մենք Արցախեան ճակատի վերջին պարտութիւնը լոկ ճակատամարտի կորուստ կը նկատենք ու անպայման յաղթելու ենք շարունակուող պատերազմին:

Մենք Հայաստանի այսօրուան իշխանութեան պարտուողական եւ յանձնուողական քաղաքականութեան կտրուկ դէմ ենք, եւ անպայմանօրէն վերականգնելու ենք հայ ժողովուրդի մարտունակութիւնը եւ Մայիսեան գոյամարտերու օրինակով սխրանքներ գործելու կամքը:

Մենք կ'ապրինք այնպիսի տարածաշրջանի մէջ, ուր թոյլը չի կրնար գոյատեւել. մենք կարող ենք եւ պէտք է կերտենք ուժեղ պետութիւն՝ հզօր բանակով, որպէսզի զարգանանք առանց զիջելու. եւ պարտաւոր ենք կանխել որեւէ կենսական զիջումներ ենթադրող պայմանագիր, բացառելով առանց ժողովուրդի անմիջական մասնակցութեան որեւէ համաձայնութեան կայացում:

Եւ մենք կը խոստանանք դաշնակցականի վայել վճռակամութեամբ շարունակել պայքարը:

Այո, մենք տէրն ենք մեր հայրենիքին:

Այո, մենք պաշտպանն ենք Հայաստանի ու Արցախի բոլոր իրաւունքներուն, որոնցմէ որեւէ նահանջ անթոյլատրելի է:

Մենք մարտահրաւէրներէ երկնչողը չենք. մենք վստահ ենք, որ ազգային ուժերու համախմբումով կարող ենք բեկանել պատմութեան ընթացքը, ինչպէս կատարեցինք Սարտարապատի, Ղարաքիլիսէի եւ Բաշ Ապարանի ճակատամարտներու արդիւնքով:

Եւ հանրապետութեան հիմնադիր Արամի յուշարձանի առջեւ հաւաքուածներս այսօր կը վերանորոգենք մեր ուխտը՝ ազատագրելու հայրենիքն ու հայութիւնը ամէն տեսակի կապանքներէ ու անիրաւութենէ:

Կեցցէ՛ Հայաստանը,

Կեցցե՛ն Արցախի Հանրապետութիւնն ու Արցախահայութիւնը,

Կեցցէ՛ աշխարհատարած ողջ հայութիւնը»:

2023 Մայիս 28
Երեւան

Հայաստանի Առաջին Հանրապետության 105-ամյակն Արցախում

Մայիսի 28-ին հայ ժողովուրդը նշում է Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման օրը: Այս տարի լրանում է Բագրատունյաց թագավորության եւ Կիլիկյան Հայաստանի անկումից ի վեր շուրջ 6 դար անց ստեղծված անկախ Հայաստանի վերածննդի 105-ամյակը:

1918թ. մայիսյան հերոսամարտերը պատմական նշանակություն ունեցան եւ հավերժ անմոռաց կմնան հայոց պատմության փառավոր էջերում: Մայիսյան հաղթանակների հիմնական գաղտնիքը անձնվեր ղեկավարությունն էր՝ ի դեմս Հայ Յեղափոխական Դաշնակցության, ով հայ ժողովրդի համար այդ ծանրագույն ժամանակաշրջանում իր ուսերին էր վերցրել հայ ժողովրդին առաջնորդելու պարտականությունը, ինչը պսակվել է հաջողությամբ:

1918թ. մայիսյան ճակատագրական օրերին, երբ թուրքական բանակը հասել էր Արարատյան դաշտ եւ սպառնում էր գրավել Էջմիածինն ու Երեւանը, եւ դրված էր հայ ժողովրդի հետագա գոյության, լինել-չլինելու հարցը, իսկ ժողովրդին պատել էր հուսալքությունը, իր մշտական լավատեսությամբ, անկոտրում կամքով, վայրագ թշնամուն ջարդելու անզիջում ցանկությամբ Արամ Մանուկյանը ժողովրդի մեջ նորից վառեց պայքարի ոգին եւ ժողովրդին առաջնորդեց դեպի մարտի դաշտ: Մահ կամ ազատություն գաղափարով տոգորված հայ ժողովուրդն ի վերջո կարողացավ իր անձնվիրական կռվով հաղթանակ տանել Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերում, որն էլ դարձավ հայոց պետականության կերտման հիմքը:

Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիր, Երեւանի դիկտատոր, դաշնակցական Արամ Մանուկյանն այդ օրերին նկատում է. «Մենակ ենք եւ պէտք է ապավինենք միա՛յն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու եւ թէ՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»:

Չնայած միայնակ, անվերջ ու անլուծելի թվացող խնդիրներին՝ երկրի դաշնակցական ղեկավարությունը կարողանում է պատվով կատարել իր առջեւ դրված խնդիրները: Տքնաջան ու անձնուրաց աշխատանքի շնորհիվ շատ կարճ ժամանակում ստեղծվեցին պետական իշխանության մարմիններ, կանոնավոր բանակ, երկրում հաստատվեց կարգ ու կանոն:

Հայոց պետականության վերականգնման՝ Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման 105-ամյակի առթիվ ՀՅԴ Արցախի երիտասարդական միությունը եւ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը Ստեփանակերտի Մշակույթի եւ երիտասարդության պալատում համատեղ կազմակերպել են տոնական համերգ:

Համերգին մասնակցում էին ԱՀ պաշտոնավարող ու նախկին նախագահները, ԱՀ ԱԺ նախագահն ու պատգամավորներ, կառավարության անդամներ, հոգեւորականներ, ՀՅԴ Արցախի ԿԿ, ՀՅԴ Արցախի շրջանային կոմիտեների, ՀՅԴ Արցախի երիտասարդական եւ պատանեկան միությունների, Հայ օգնության միության Արցախի մեկուսի մասնաճյուղի, ՀՄԸՄ Արցախի Կենտրոնական վարչության անդամներն ու սկաուտները, ՀՅԴ Հայ դատի Արցախի գրասենյակի, Համազգային հայ կրթական եւ մշակութային միության Արցախի գրասենյակի անդամներ, Արցախում գործող համալսարանների ռեկտորներ ու ուսանողներ եւ այլ հյուրեր:

Նախքան համերգային ծրագրի մեկնարկը ներկաները մեկ րոպե լռությամբ պատվեցին հայրենիքի բոլոր ազատամարտերում անմահացած հերոսների հիշատակը: Համերգը մեկնարկել է ՀՀ եւ ԱՀ պետական օրհներգերով, որից հետո ելույթ են ունեցել ՀԱԵ Արցախի թեմի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնի տնօրեն Տեր Վաչագան քահանա Գյուրջյանը, ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար, պատմաբան Լեռնիկ Հովհաննիսյանը, ՀՅԴ ԱԵՄ-ի Կենտրոնական վարչության անդամ Տիրուհի Գասպարյանը:

Մայիսյան հերոսամարտերն ապացուցեցին, որ մեր ամենամեծ եւ անդավաճան դաշնակիցները երկուսն են՝ Աստված ու մենք ինքներս

Տեր Վաչագան քահանա Գյուրջյանը, ողջունելով ներկաներին, ընթերցել է Արցախի թեմի առաջնորդ Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանի ուղերձը մայիսյան տոների վերարժեւորման առիթով.

«Սիրելի՝ հայրենակիցներ, Սարդարապատի հերոսամարտին նվիրված հայտնի երգի տողերն են գալիս մեր մտքին, երբ վերստին հիշում ենք 1918 թ. հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտերի մասին: Բավականին դժվար օրեր էին. եղեռնից մազապուրծ ժողովուրդը դեռ չէր հասցրել ուշքի գալ, պատմական Հայաստանից մնացել էր մի փոքրիկ հողակտոր, իսկ դարավոր թշնամին վերստին փորձում էր վերացնել նաեւ այդ մնացորդացը: Կարծես թե իրապես փրկության ոչ մի ելք ու ճար չկար, եւ խենթություն էր նման տկար վիճակով այդպիսի անհամաչափ ուժի դեմ ելնելը: Բայց փակուղում հայտնված մեր ազգը կայացրեց վերջին հույսի իր որոշումը՝ մահ կամ ազատություն: Մայր Աթոռը լքելու եւ ավելի ապահով վայր տեղափոխվելու առաջարկի մերժումը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ 5-ի կողմից՝ գոտեպնդեց ու ոգեւորեց օրվա ռազմաքաղաքական ղեկավարությանը, ովքեր միասնաբար լծվեցին պայքարի կազմակերպմանը: Եկեղեցու զանգերի ղողանջը կենաց մահու մարտի էր կանչում բոլորին, եւ հոգեւորականների կողմից օրհնված եւ անմիջական մասնակցությամբ առաջնորդված պայքարը իրականություն դարձրեց Սարդարապատի հրաշքը:

Կարեւոր ենք համարում արձանագրել, որ մայիսյան հերոսամարտերի գլխավոր դերակատարներից մեկը, եթե ոչ հիմնականը, եղել է արցախցի դաշնակցական Արամ Մանուկյանը: Արցախից մահապարտների գունդը՝ Դանիել Բեկ-Փիրումյանի գլխավորությամբ մասնակցել է այդ պայքարին, իսկ Մայր Աթոռի միաբան հոգեւորականներից կազմված մահապարտների գունդը եւս ղեկավարում էր ծնունդով արցախցի Գարեգին եպս. Հովսեփյանցը: Սա նշանակում է, որ Արցախը անմնացորդ նվիրված էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին, որովհետեւ այլ կերպ լինել չէր կարող:

Սիրելիներ, այսօր էլ, երբ մեր ազգը ապրում է այդ ժամանակներին հար եւ նման օրեր, երբ արդեն Արցախն ունի համազգային միասնության կարիք, շատ կարեւոր է մայիսյան հերոսամարտերի եւ դրանց պտուղը հանդիսացող առաջին հանրապետության հիմնադրման պատմական իրողությունների հիշատակումն ու գործնական վերարժեւորումը: Ուշագրավ է, որ այն օրերին երկրի աշխարհիկ ղեկավարները լսեցին Վեհափառի հորդորները եւ փոխեցին իրենց ծրագրերը: Դարերի հեռավորությունից հստակ տեսանելի է, որ երբ հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունները գործում են ներդաշնակ, երկիրը դառնում է գրեթե անպարտելի մի ամրոց:

Մայիսյան հերոսամարտերն ապացուցեցին, որ մեր ամենամեծ եւ անդավաճան դաշնակիցները երկուսն են՝ Աստված ու մենք ինքներս: Չմոռանանք մեր հերոսական անցյալը, եւ հիշենք, որ այդ անցյալը հենց մերն է եղել ու նորից կարող է մերը դառնալ: Թող Աստված միաբան սիրով պահի Ազգս Հայոց եւ Եկեղեցիս Հայաստանեայց»:

Վայ նրանց, ովքեր զիջումներով պայմանի են պատրաստվում

Ելույթով հանդես է եկել նաեւ ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար, պատմաբան Լեռնիկ Հովհաննիսյանը.

«ԱՀ մեծարգո նախագահներ, ԱԺ հարգելի նախագահ, պետական այրեր, սիրելի հայրենակիցներ, հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանը սկսվում է 1918թ. մայիսյան հերոսամարտերով եւ նրա ծնունդ անկախ պետականության վերականգնմամբ՝ ի դեմս Հայաստանի Առաջին Հանրապետության: Մայիսյան հաղթական հերոսամարտերը հայ ժողովրդին տվեցին երկու մեծագույն արդյունք: Առաջինը՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերով նաեւ Բաքվի հայության ինքնապաշտպանությամբ վիժեցվեց արեւելյան Հայաստանը զավթելու եւ տեղի հայությանը ցեղասպանելու երիտթուրքական ծրագրերը, եւ երկրորդ՝ հայ ժողովուրդը ոչ միայն պաշտպանեց իր գոյությունը, այլեւ ստիպեց հակառակորդին՝ հաշվի նստել իր հետ եւ ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: Հայ ժողովդրի պատմության թերեւս ամենաողբերգական էջի՝ Հայոց ցեղասպանությունից 3 տարի անց, ռազմաքաղաքական մեծ ալեկոծություններից ու վայրիվերումներից հետո, արեւելյան Հայաստանում հայ ժողովուրդը ուժ գտավ իր մեջ՝ հռչակելու անկախություն եւ կերտելու հայոց պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունը:

Պատմական այդ իրադարձությունը, անտարակույս, կարելի է համարել 20-րդ դարի հայոց պատմության ամենանշանավոր իրադարձություններից մեկը:

Հայաստանի Առաջին Հանրապետության կերտողը հայ ժողովուրդն է: Պատահական չէ, որ Գարեգին Նժդեհը իրավացիորեն մայիսի 28-ի հեղինակը համարում է ողջ հայությանը իր գործողություններով, տառապանքներով, կամքով եւ ոգով: Ժողովրդի հետ միասին՝ դրանում իր քաղաքական մասնակցությամբ անուրանալի դերակատարություն ունի Հայ Յեղափոխական Դաշնակցությունը: Լրացուցիչ ապացույցի կարիք չունի այն իրողությունը, որ ՀՅԴ-ն ստանձնել էր անկախ պետականության, ժողովրդի եւ հայրենիքի անվտանգության ողջ պատասխանատվությունը:

→ 6

Կոռնիձորից Ստեփանակերտ. Պայքարի դրոշը վայր չի դրվելու

Մայիսի 20-ին Կոռնիձորում տեղի է ունեցել «Կամավորական շարժում» ՀԿ նախաձեռնած բազմահազարանոց հանրահավաք, որին մասնակցում էին Հայաստանի տարբեր մարզերից եւ Երեւանից ժամանած քաղաքացիներ, քաղաքական-հասարակական գործիչներ:

Հանրահավաքը մեկնարկեց ՀԱՍԵ Սյունյաց թեմի հոգեւորականների օրհնությամբ եւ Տերունական աղոթքով:

Ելույթներ ունեցան Սիսական գնդի հրամանատար Աշոտ Մինասյանը («Աշոտ երկաթ»), ՀՅԴ ՀԵՄ ԿՎ նախագահ Գոռ Սարգսյանը, «Համախմբում» շարժման խորհրդի անդամ Ավետիք Չալաբյանը, ՀՅԴ քաղաքական ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը, «Կամավորական շարժում» ՀԿ նախագահ Հրանտ Մարգարյանը:

Եկել ենք ասելու, որ մենք մեր երկրի տերն ենք

Մենք եկել ենք այստեղ մեր վճռականությունն արտահայտելու, եկել ենք ասելու, որ մենք կամք ունենք մեր երկրին տեր կանգնելու համար. Կոռնիձորում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ հայտարարել է «Կամավորական շարժում» ՀԿ նախագահ Հրանտ Մարգարյանը:

«Մենք կանգնած ենք մեզ պարտադրված սահմանի վրա եւ մեզանից աջ եւ ձախ գտնվում է մինչեւ ատամները սպառազինված թշնամին: Մենք ասել ենք՝ մենք ձեզնից վախեցողը չենք: Մենք եկել ենք ասելու, որ մեր երկրի տերն ենք: Եկել ենք ասելու, որ այն, ինչ որ դուք ուզում եք մեզ պարտադրել, մենք չենք ընդունելու, մենք ընդվզում ենք դրա դեմ: Առ ոչինչ ենք համարելու բոլոր այն փաստաթղթերը, որը պետք է ժողովրդի կամքին հակառակ ստորագրվի»,- ասել է նա:

«Դանակը հասել է ոսկորին, մենք կորցնում ենք ամեն ինչ, այլեւս իրավունք չունենք դանդաղելու, համակերպվելու, երկու անգամ մտածելու: Մենք պարտավոր ենք վիճակը փոխել, պետք է կարողանանք ազդել վիճակի, կացության վրա»,- իր ելույթում նշել է Հրանտ Մարգարյանը:

Նա ընդգծել է, որ պետք է առաջին հերթին մենք մեր հույսը կտրենք օտարից. «Ոչ ոք չի գալու մեր տեղը կռվի, սուտ է: Երբեք դա չի լինելու, մենք պետք է հենվենք մեր ժողովրդի վրա: Ունենք մենք այդ հնարավորությունը: Երբ մենք կռվենք, պայքարենք, հրապարակի վրա լինենք, ասենք՝ տեր ենք մեր իրավունքներին, այն ժամանակ կգտնենք նաեւ զինակիցներ, բայց երբեք չմտածեք, որ մեկ ուրիշը կգա մեր տեղը կկռվի, մեր իրավունքները կպաշտպանի: Ոչ ոք դա չի անի, ժողովուրդ:

Մեր սեփական ուժերով պետք է մեր նպատակն իրականություն դարձնենք:

Ուժեղ ենք, անպարտելի ենք, եթե միասին ենք»:

«Եթե Արցախը տանք, Հայաստանն էլ տվել ենք, բայց մենք չենք տալու, մենք փրկելու ենք Արցախն էլ, Հայաստանն էլ հետը»,- ասել է Հրանտ Մարգարյանը:

Ըստ Մարգարյանի՝ հայ երիտասարդությունը չի հաշտվի այս իրողության հետ, չի հաշտվի այդ պարտության հետ:

«Նրանք ազգային ազատագրական շարժում կսկսեն, նրանք թշնամու ոտքերի տակ կայրեն զավթված հողերը...

Թող ոչ ոք չվախեցնի մեզ թշնամով: Ես այն մարդկանցից մեկն եմ եղել, որոնք 1990-ից մասնակցել են ազգային ազատագրական պայքարին:

Հավատացեք, այն ժամանակ էլ մեր մեջ կային վախկոտներ, բայց քաջերը միշտ լի են վճռականությամբ, նրանք են ստեղծում իրավիճակը:

Ես համոզված եմ, որ մեր պայքարն ընդլայնվելու է, տարածվելու է: Մենք կհասնենք մեր իրավունքներին: Մենք կազատագրենք Արցախը շրջափակումից, մենք կազատագրենք զավթված Հադրութը եւ Շուշին, Շահումյանը եւ Գետաշենը:

Ես հավատում եմ դրան եւ վստահ եմ, որ մեր երիտասարդությունը վայր չի նետի այդ պայքարի դրոշը, կշարունակի այն, եւ մենք կհասնենք հաջողության»,- ընդգծել է նա:

Պետք է միավորվենք մեր կորցրածները վերադարձնելու համար

«Այսօրվա մեր հավաքը ոչ միայն խորհրդանշական է, այլ նաեւ մեկնարկ է լինելու մեծ պայքարի, որն անպայման հաղթանակով է ավարտվելու. Կոռնիձորում հայտարարել է ՀՅԴ Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ, ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանը:

Այդ պայքարն անպայման ավարտվելու է հաղթանակով, ես դրանում չեմ կասկածում: Մենք մեր առաջին ազատամարտը հենց այդպես էլ սկսեցինք: Մենք հասկացանք, թե որտեղ է մեր ուժը, մեր ուժի աղբյուրը. դա մեր միասնությունն է: Այսօր թշնամին ցույց է տալիս իր գլխավոր հարվածի ուղղությունը՝ անցակետը դնելով: Նա մեզ ուզում է բաժանել, քանի որ գիտի՝ բաժանելով կարելի է տիրել այս ժողովրդին: Ուրիշ ձեւ չկա, որ այս ժողովուրդը հանձնվի: Նրան միայն ներսից պետք է պառակտել»,-ասել է պատգամավորը:

Նրա խոսքով՝ վերջին տարիներին հայ ժողովրդի գլխին հենց այս գործընթացն են փաթաթել:

«Մեզ սովորեցնում են, մեզ համոզում են, որ մենք անճար ենք:

Մեզ համոզում էին, որ թշնամին մեզանից հարուստ է, ավելի փորձված, բայց եթե այդպես մտածեինք, առաջին աշխարհամարտն էլ չէինք սկսի: Այն ժամանակ էլ նույնն էր, թշնամին բազմապատիկ էր եւ մեզանից ավելի ռեսուրսներ ուներ: Բայց մենք միացանք մեկ գաղափարի շուրջ, որ Հայաստանն ու Արցախը մեկ են»,- ընդգծել է Ռուստամյանը:

Նրա խոսքով՝ պատվով ապրելու համար պետք է միավորվել, կորցրածները վերադարձնել, այլ ոչ թե միավորվել հանձնելու համար:

«Մեր եղբայրներն ու քույրերը Արցախում չեն հանձնվում, հնարավոր չէ կոտրել արցախցու ոգին, որովհետեւ դա այն ժողովուրդն է, որ մսով ու արյունով կառչած է իր հողին եւ մենք պետք է իրենց հետ լինենք: Ամենամեծ ամոթն է այս սերունդի, որ կորցնենք այն, ինչ ձեռք է բերվել արյան գնով»,- ասել է նա:

Նա նաեւ դիմել է իշխանություններին՝ սթափության կոչ անելով:

Պարտավոր ենք տեր լինել Արցախին եւ արցախցուն

31 տարի առաջ, այս օրվանից 2 օր առաջ՝ մայիսի 18-ին Արցախյան զորագնդերի հետ միասին մենք ստեղծել ենք կյանքի ճանապարհը, որը դարձել էր միասնության ճանապարհ. այս մասին հիշեցրել է Սիսական գնդի հրամանատար Աշոտ Մինասյանը:

«Ցավոք սրտի, սրանից 5 տարի առաջ եկան իշխանության ոմանք, ովքեր ստիպեցին մեզ անձնատուր լինել: Եկան մարդիկ, ովքեր փորձեցին մեր արժանապատվությունը նսեմացնել, փորձեցին ստորացնել մեզ, դարձնել մի ազգ, որի պիտակը կոչվում է՝ վախկոտ: Սակայն մեր ազգը դա չէ:

26 տարի շարունակ ես Արցախ եմ մտել հպարտորեն, արժանապատվորեն՝ որպես հաղթանակած հրամանատար, սակայն պարտություն եմ կրել վերջին 5 տարում 5 անգամ եւ ավելի: Առաջին անգամ պարտվել եմ, երբ 2018 թվականին սրանք եկան իշխանության: Երկրորդ անգամ պարտվել եմ, երբ 2020 թվականին մեզ արհեստական պարտության տարան այս իշխանությունները: 2021 թվականին ես պարտվել եմ, երբ սրանք նորից ընտրվեցին: 2022 թվականին պարտվել եմ, երբ սկսեցին մեր սահմանները զատել եւ նվիրել թուրքերին: Հիմա պարտվում եմ ամեն օր: Ամեն օր պարտվում եմ, երբ սպանում են իմ հաղթած գեներալին: Ամեն օր պարտվում եմ, երբ բանտարկված են իմ գեներալները: Ամեն օր պարտվում եմ, երբ ձեռք են բարձրացնում մեր եկեղեցու, մեր Վեհափառի վրա: Ամեն օր պարտվում եմ, երբ հերոսածին մորն են դատում: Ոտքի ելեք, հայ ժողովուրդ, Արցախը մենակ չէ: Մենք բոլորս արցախցի ենք: Մենք բոլորս հայ ենք: Մենք բոլորս մի ժողովուրդ ենք»,- ասել է Աշոտ Մինասյանը:

Նրա խոսքով, ինքը՝ որպես հայ ազգի զավակ, որպես տարիքն առած մարդ, պատրաստ է մշտապես լինել Արցախի հետ, Արցախի կողքին՝ մեր ժողովրդի հետ միասին, որովհետեւ ոչ ոք իրավունք չունի մեզ զատելու, ոչ ոք իրավունք չունի մեզ կոտրելու:

«Հայ ազգը երբեք չի կոտրվել, ինչ սրանք ասում են՝ սուտ է, շինծու է: Նայեք, մեր թիկունքում Բերձորն է, Քաշաթաղն է, որն անջատում է մեզ Արցախից, մենք իրավունք չունենք Արցախին թողնել մենակ:

Մենք պարտավոր ենք լինել Արցախի հետ ամեն օր եւ ամեն ժամ: Մենք բոլորս արցախցի ենք, մենք տեր ենք Արցախին: Ոչ ոք իրավունք չունի Արցախը նվեր տալու: Արցախը մերն է, մենք՝ Արցախինը:

Ոչ ոք իրավունք չունի մեզ բաժանելու: Իրավունք չունենք Արցախը տալու ինչ-որ ոջիլների պատճառով: Թուրքերը նստած են Երեւանի կենտրոնում, թուրքերը մեր մեջ են, եւ դրա համար է այսօր բաժանում տեղի ունեցել: Մենք պարտավոր ենք դուրս մղել այդ թուրքերին: Պարտավոր ենք տեր լինել Արցախին եւ արցախցուն»,- ասել է Աշոտ Մինասյանը:

ՀՅԴ ՀԵՄ ԿՎ նախագահ Գոռ Սարգսյանը հանրահավաքի ժամանակ իր խոսքն ուղղեց ադրբեջանցի երիտասարդներին, նշելով, որ իրենց օրվա իշխանությունների պահվածքը իրենց վերջում արնաքամ է անելու:

➔5

Կոռնիձորից Ստեփանակերտ պայքարի դրոշը վայր չի դրվելու

4 ← «Մենք այստեղ չենք եկել որպես էկոակտիվիստներ կամ բնապահպաններ: Մենք ուղիղ եկել ու կանգնել ենք այստեղ՝ ազգային ազատագրական պայքարի ջահը մեր ձեռքին, եւ ասում ենք ձեզ՝ ձեր ներկայիս իշխանությունների պահվածքը վաղը ձեզ արնաքամ է անելու»,-ասել է Գոռ Սարգսյանը:

Նա նշեց, որ այսօր թեեւ ինչ-ինչ պատճառներով թշնամին հաղթողի դերում է, սակայն վստահեցրեց՝ դա ժամանակավոր է:

«Դուք չեք վայելելու մեր Շուշին ու Հադրութը: Դուք չեք վայելելու մեր հայրենիքը: Մենք Արցախի կողքին ենք: Արցախը երբեք չի լինելու Ադրբեջանի կազմում: Հայկական գործոնն այս տարածաշրջանում միշտ լինելու է, եւ սա ուղղակի խոսքեր չեն: Մենք կկոտրենք այն ձեռքը, որը կստորագրի հակահայկական փաստաթուղթը: Լիսբոնը վկա, Արցախյան առաջին պայքարը վկա, Նեմեսիսը վկա, դա լինելու է: «Հարսանիք լեռներում» կրկին լինելու է, եւ մենք մասնակցելու ենք այդ հարսանիքին: Ադրբեջանին մենք ենք խաղաղություն պարտադրելու»,- նշել է Գոռ Սարգսյանը:

Մենք դուրս ենք եկել մեզ պարտադրված ընկճախտից, խեղճությունից

Սա առաջին քայլն է, որ մենք ցույց տանք, որ Արցախի կողքին ենք եւ մեր շարքերը զորանում են. հանրահավաքին ասել է «Համախմբում» շարժման խորհրդի անդամ Ավետիք Չալաբյանը:

«Մենք դուրս ենք եկել մեզ պարտադրված ընկճախտից, խեղճությունից, մեր շարքերն ավելանալու են ամեն օր: Արցախն արդեն 105 տարի է՝ պայքարում է, այսպես կոչված, ադրբեջանական հանրապետության կեղծ սուլթանական միավորման դեմ: Մի միավորման, որն ստեղծվել է հայկական, թալիշական, լեզգիական, ուրիշների հողերի վրա: 105 տարի է, ինչ ստեղծվել է այդ արհեստական միավորումը, Արցախը հերոսաբար պայքարում է դրա դեմ: Արցախը տեսել է կորուստներ, Արցախը տեսել է հաղթանակներ», - նշել է Ավետիք Չալաբյանը:

Նա ցավով նշեց, որ բոլորի աչքի առջեւ արյունով ազատագրված հողը առանց մի կրակոցի հանձնվեց թշնամուն:

«Մենք եկել ենք խաղաղ ասելու՝ բացեք այս ճանապարհը, չբացեք՝ ուժով ենք բացելու, այնպես, ինչպես բացել ենք 31 տարի առաջ. մի՛ փորձեք մեր ուժը»,- ասել է նա:

Ըստ նրա՝ ճանապարհը ուժով բացելու համար պետք է հավաքել այդ ուժը, որի համար պետք է բոլորն անվերապահորեն զինվորագրվեն Հայաստանի եւ Արցախի պաշտպանությանը, որովհետեւ թշնամին իր առջեւ զինված ուժ պետք է տեսնեի:

«Մեր անկախության հռչակագիրը հենված է Հայաստանի եւ Արցախի վերամիավորման վրա: Այս ամեն ինչը սկսել է միացումից, եւ մենք այսօր գնալու ենք նրան, որ քրեականացնենք Հայաստանի անունից Արցախը հանձնելու ցանկացած փորձ: ՀՀ ոչ մի իշխանություն եւ ոչ միայն սրանք, իրավունք չի ունենալու ՀՀ անունից Արցախը ճանաչել Ադրբեջանի կազմում: Մենք դա օրենքով քրեականացնելու ենք»,- ասել է Ա. Չալաբյանը:

Նա տեղեկացրեց, որ այդ գործընթացը շուտով կսկսվի, եւ կոչ արեց բոլորին մասնակից դառնալ այդ գործընթացին:

«Խաղաղությունը երբեք չի կարող լինել մեր ազատության եւ իրավունքների հաշվին, խաղաղությունը պետք է լինի արդար ու արժանապատիվ: Այս 2 ժողովուրդները շատ են արյուն թափել: Այդ արյունահեղությունը կդադարի միայն այն ժամանակ, երբ նրանք հաշվի կնստեն մեր շահերի հետ»,- նշել է Չալաբյանը:

Նրա խոսքով, մենք պետք է մեր մեջ վերագտնենք պայքարելու ուժը, պետք է գտնենք սեր ու համերաշխություն, պետք է կառուցնեք ոչ միայն անվտանգ, այլեւ արդար հայրենիք:

«Մեր ժողովուրդն ամբողջ աշխարհից պետք է վերադառնա Հայաստան ու Արցախ, պետք է սիրի այս հողը, սարերն ու ձորերը: Մենք պետք է այստեղ հավաքվենք 10 մլն հայությամբ եւ այդ ժամանակ մեզ հաղթել չի լինի: Մենք դա կարող ենք անել, եթե մեր երկիրը լինի արդար, մենք իրար նկատմամբ լինենք սիրող ու հանդուրժող»,-ասել է Ավետիք Չալաբյանը:

Ունենք կամք՝ ազատագրելու Արցախը շրջափակումից

Հանրահավաքի ավարտին հնչեց ուղերձ՝ ուղղված հայությանը եւ ի լուր աշխարհի:

«Մենք՝ Արցախի եւ արցախահայության զորակցության հանրահավաքի մասնակիցներս, հայտարարում ենք, որ՝

- հայությունն ունի բավարար ներուժ՝ հաղթահարելու առկա մարտահրավերները եւ բեկում մտցնելու վիճակի մեջ.

- հայության դիմադրության ոգին անկոտրում է. Ադրբեջանը մեծ գին է վճարելու իր ցանկացած սադրանքի ու ագրեսիվ գործողության համար,

- Արցախի ազատության եւ ինքնորոշման իրավունքի իրացման դեմ կատարվող ցանկացած գործողություն արժանանալու է հակազդեցության, ում կողմից էլ որ այն կատարվի,

- Արցախի ինքնիշխանության եւ արցախահայության անվտանգության ապահովմանն ուղղված ռազմավարական ծրագրի մշակումը եւ գործադրումը Հայաստանի եւ Արցախի իշխանությունների պարտավորությունն է,

- Հայաստանի որեւէ իշխանության յուրաքանչյուր գործողություն, որը կասկածի տակ կդնի Արցախում անցկացված հանրաքվեների արդյունքները, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ու դրա անքակտելի մասը կազմող Անկախության հռչակագիրը, ի սկզբանե առ ոչինչ են,

- Կանխելու ենք խաղաղության անվան տակ կենսական զիջումներ պարտադրող կապիտուլիացիոն պայմանագրի ընդունումը, չենք հանդուրժելու առանց ժողովրդի անմիջական մասնակցության որեւէ համաձայնության կայացում,

- Իրական եւ երաշխավորված խաղաղություն կարող է լինել, եթե այն հաստատված է արդարության ու ճշմարտության վրա:

Չի կարող լինել խաղաղություն, քանի դեռ գերված են Հադրութն ու Շուշին, քանի դեռ շրջափակված է Արցախը, վտանգված է արցախահայության ազատ ապրելու իրավունքը,

- Մեր պայքարը շարունակական է՝ հարկ եղած դեպքում մենք պատրաստ ենք մեկ մարդու պես զինվորագրվել եւ պաշտպանել մեր հայրենիքը: Ստեղծված իրավիճակում ինքնակազմակերպմամբ պաշտպանության եւ անվտանգության հրատապ խնդիրների լուծումն այլընտրանք չունի,

- Որպես արժանապատիվ եւ հայրենատեր հայեր՝ մենք վճռական ենք ու տեր ենք Արցախին: Մենք բոլորս արցախցի ենք եւ ունենք կամք ազատագրելու Արցախը շրջափակումից, վերականգնելու Արցախի տարածքային ամբողջականությունը:

Արցախը եղել ու շարունակելու է լինել հայկական:

Կեցցե՛ Արցախը, Կեցցե՛ Հայաստանը, կեցցե հայ ժողովուրդը»:

Զորակցության երթ Կոռնիձորի հանրահավաքին

Նույն պահին Արցախում նույնպես երթ է տեղի ունեցել՝ ի աջակցություն Կոռնիձորի հանրահավաքի: Ստեփանակերտից քաղաքացիները երթով շարժվել են «Կամավորական շարժում» ՀԿ-ի կողմից Կոռնիձորում նախաձեռնված «Հանուն Արցախի, ընդդեմ Ադրբեջանի» համաժողովրդական հանրահավաքի մասնակիցներին ընդառաջ:

Երթը մեկնարկել է Ստեփանակերտի Եղբայրական հուշահամալիրից եւ ուղեւորվել դեպի Ստեփանակերտ-Գորիս մայրուղու սկզբնամաս՝ Զառին Բաղ կոչվող տեղամաս:

Ակցիայի նպատակը Արցախի ու Հայաստանի ժողովրդի միասնականության ընդգծումն էր, Արցախը հայկական պահելու միասնական պայքարի ու կամքի արտահայտումը եւ մեր անհամաձայնությունը՝ պարտադրվող սահմաններին:

Քայլերթի ավարտին ելույթներ են ունեցել ՀՅԴ Արցախի երիտասարդական միության Կենտրոնական վարչության անդամ Տիրուհի Գասպարյանը, «Ո՛չ Արցախի էթնիկ զտմանը» շարժման եւ «Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ»-ի անդամներ Արշակ Աբրահամյանն ու Դավիթ Բաղրյանը:

ՀՅԴ ԱԵՄ-ի ԿՎ անդամ Տիրուհի Գասպարյանը ելույթի իր խոսքում ասել է, որ այստեղ հավաքվելու նպատակը մեր արժանապատվությանը, մեր կամքի ուժին, Արցախ-Հայաստանին տեր լինելու մեր պատրաստակամությանը, այս հողի վրա ապրելու ու պայքարելու մեր նպատակին այո ասելն էր:

«Մեզանից մի քանի կիլոմետր այն կողմ՝ սահմանամերձ Կոռնիձոր գյուղում, մեր հայրենակիցներ են հավաքվել, ովքեր Մայր Հայաստանի տարբեր անկյուններից եկել են ասելու, որ մեր կողքին են, որ համամիտ են մեր այո-ին եւ կողմ են մեր ոչ-ին, որ մեզ պես տերն են Արցախին եւ չեն ընդունելու այն, ինչ փորձում են պարտադրել: Մենք տեր կլինենք մեր պատմական իրավունքներին, մենք չենք ընկրկի ոչ մի փորձության առջեւ. սա է մեր ուղերձը Ադրբեջանին եւ ողջ աշխարհին... Զիջումը երբեք քաղաքականություն չպիտի դառնա»,- ասել է Տ. Գասպարյանը:

Նախաձեռնող խմբի անդամ Արշակ Աբրահամյանն իր խոսքում նշել է, որ երթին միացած արցախցիներն ապացուցում են, որ որքան էլ ՀՀ վարչապետն ու իշխող վարչակազմը փորձեն ձեռքերը լվանալ Արցախից, դա նրանց մոտ չի ստացվելու: Արցախը եղել է, կա ու մնալու է հայկական:

«Ապրիլի 23-ից սկսած՝ մեր թշնամին, եռակողմ հայտարարությունն ու միջազգային բոլոր կազմակերպություններին անտեսելով, հնարավոր եւ անհնարին բոլոր միջոցներով փորձում է մեզ ճնշել, արցախցուն իր տնից հանել: Արցախը արցախցունն է»,- իր խոսքում նշել է «Ոչ Արցախի էթնիկ զտմանը» նախաձեռնության անդամ Դավիթ Բաղրյանը:

Քայլերթի մասնակիցներից Արմեն Պետրոսյանն էլ իր խոսքում ասել է, որ ՀՀ-ի՝ իշխանությունը օկուպացիայի ենթարկած վարչախումբը հարվածում է մեր սրբություններին, մեր լեռներին, փորձում է գերի մնացած Արարատի կարգավիճակը հավասարեցնել պետական սահմանի ներսում գտնվող Արագածի հետ, որն անընդունելի է:

Ն. Փաշինյանը խաբել է ոչ միայն արցախահայությանը, այլեւ ՀՀ-ում ապրող մեր հայրենակիցներին. Արթուր Մոսիյան

2023 թվականի մայիսի 22-ին ԱՀ ԱԺ նիստի ընթացքում պատգամավորական հայտարարությամբ հանդես է եկել ԱՀ ԱԺ «ՀՅ Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանը:

«Հարգարժան ԱԺ նախագահ, հարգելի՛ գործընկերներ, սիրելի՛ հայրենակիցներ,

Նիկոլ Փաշինյանի այսօրվա ասուլիսի մանրամասներին մեր գործընկերներից շատերն արձագանքեցին: Ես չեմ անդրադառնա այն հակահիրավական գործընթացին, որը փաստորեն խախտում է ոչ միայն ՀՀ եւ ԱՀ Սահմանադրությունն ու Գերագույն խորհրդի որոշումը, այլեւ մի շարք ասպեկտներ:

Ես կցանկանայի անդրադառնալ Ն. Փաշինյանի արած այն հայտարարություններին, որով նա խաբել է ոչ միայն արցախահայությանը, այլեւ սեփական ժողովրդին: 100 հազարավոր քվեներ ստանալու մանիպուլյացիաներն արդեն չեն անցնի, որովհետեւ Ն. Փաշինյանն այլ բան էր նախատեսել Արցախի համար, եւ փաստորեն ստացվում է, որ նա խաբել է ոչ միայն արցախահայությանը, այլեւ ՀՀ մեր հայրենակիցներին:

Ասում էր՝ մենք պետք է Արցախի համար ունենանք այնպիսի լուծում, որ բավարարի Հայաստանի, Արցախի եւ Ադրբեջանի ժողովրդին: Փաստորեն, Ն. Փաշինյանը բերում է լուծում, որը բավարարում է Թուրքիայի ու Ադրբեջանի ժողովրդին, բայց ոչ երբեք Հայաստանի ու Արցախի ժողովրդին, կամ էլ, Հայաստանի ժողովուրդ ասելով՝ հասկանում է իրեն ու ՔՊ վարչախմբին:

Ամեն անգամ մեր հայտարարություններին արձագանքում է, որ ճիշտ չենք հասկացել: Ես մի անգամ էլ եմ հարցնում. այդ ինչպե՞ս է ստացվում, որ ամբողջ հայ ժողովուրդը հասկանում է մի ձեւով, դուք եւ ձեր տերերը, ձեր վարչախումբը՝ այլ ձեւով:

Ակամայից հիշում եմ Հ. Թումանյանի «Չարի վերջը»: Գիտեք կկվի պատմությունը. այսօր ՀՀ իշխանությունները գործում են կկվի հոգեբանությամբ: Ուրիշ հարց էր, որ այնտեղ կկուն միամիտ էր, իսկ արդյո՞ք նրանք միամտությամբ են այսքանն անում: Ես կարծում եմ, որ 2018թ. թավշյա կոչվող հեղաշրջումն ուներ մեկ նպատակ, դավադիր ծրագիր՝ Հայաստանը մասնատելու:

Ժամանակին, երբ խոսում էինք դրա մասին, մեր հայրենակիցներից շատերը մեզ մեղադրում էին, տանում քաղաքական շահարկումների եւ այլն: Պատմությունը ցույց տվեց, որ իրականում մենք հասանք այն օրին, ինչ ասում էինք:

Պատմությունը կրկնվելու փորձ ունի, եւ պատմությունը շատ դաժան է նրանց նկատմամբ, ովքեր անհրաժեշտ դասեր չեն քաղում:

Ես կարծում եմ՝ Նիկոլ Փաշինյանին եւ նրա վարչախմբին դիմելն արդեն դառնում է անիմաստ, որովհետեւ մենք նրանցից սպասելիք եւ պահանջելիք չունենք:

Ես դիմում եմ համայն հայությանը՝ օր առաջ կանգնեցնելու, կտրելու այդ դավադիր ձեռքը, այլապես մենք չենք ունենա ոչ միայն Արցախ, այլեւ՝ մայր Հայաստան»:

Հայաստանի Առաջին Հանրապետության 105-ամյակն Արցախում

3 ← Հայաստանի Առաջին Հանրապետությունը կազմակերպված պետություն էր՝ դրան բնորոշ անքակտելի բոլոր հատկանիշներով:

Չնայած Հայաստանի Առաջին Հանրապետության անկման գլխավոր պատճառը եղել է արտաքին բիրտ միջամտությունը, սակայն երկրի ներքին կյանքում տեղ գտան երեւույթներ, որոնք բացասաբար անդրադարձան հատկապես երկրի արտաքին քաղաքականության եւ պաշտպանունակության վրա: Առաջինը՝ հատվածականության դրսեւորումն էր. հայ ժողովրդի մի կարեւոր հատվածի՝ արեւմտահայության մի մասը այդպես էլ չճանաչեց Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ողջ հայության պետություն՝ նրան քամահրանքով անվանելով արարատյան հանրապետություն, երեւանյան հանրապետություն եւ, վերջապես, անոնս հանրապետություն: Ցավոք սրտի, այս ամենն արտահայտվեց Փարիզի Խաղաղության վեհաժողովում, որն անկասկած իր բացասական ազդեցությունը պետք է ունենար Հայ դատի դրական լուծման ընթացքի վրա: Երկրորդ, բանակում կուսակցական քարոզչությունը, որը կատարվեց՝ սկսած 1919թ. վերջից, հայ բոլշեւիկների կողմից եւ վատ կերպով արտահայտվեց մայիսյան խռովության ժամանակ: Չնայած այն ճնշվեց, սակայն այդ երեւույթը թուլացրեց իշխանության դիրքերը, քանի որ ընդվզող հիմնական տարրը զինվորականությունն էր, ուստի այդ հանգամանքը խմորումներ առաջացրեց բանակում, ընկավ նրա մարտունակությունը, որը պետք է բացասական անդրադարձ ունենար 1920թ. աշնանը թուրք-հայկական պատերազմի ժամանակ:

Չնայած պետականության կորստին, հայ ժողովուրդը չկորցրեց հավատը Հայաստանի հետագա անկախության. վկան՝ մերօրյա Հայաստանի եւ Արցախի հանրապետությունները:

Չնայած վերջին օրերին Բաքվի բռնապետի հոխորտանքներին, որը հետեւանք էր նաեւ ՀՀ օրվա իշխանությունների գաղափարական մուտանտիզմի քաղաքականության, ԱՀ բնակչությունը համայնք կամ էթնիկ խումբ չէ, այլ հազարամյակներ շարունակ իր հայրենիքում ապրող եւ պետականության գաղափարը բարձր պահող ժողովուրդ, որն իր արտահայտությունը գտավ 21-րդ դարասկզբին եւ 20-րդ դարավերջին հայկական բոլոր պետականությունների վերականգնման ժամանակ:

Ելույթի վերջում անդրադառնամ Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին օրերի մի դրվագի: 1920թ. նոյեմբերի 28-ին, երբ կայանում էր Ալեքսանդր Խատիսյանի եւ Թազիմ Կարաբեքիր փաշայի բանակցությունները, մերժելով Հայաստանի Հանրապետության առաջարկները, Թազիմ Կարաբեքիրն ասաց՝ Հայաստանի բնակչությունն ընդամենը 1 մլն է, ձեզ փոքր տարածքն էլ է բավական, եւ Ալեքսանդր Խատիսյանը վերհիշեց ընդամենը 2,5 տարի առաջ իր կուսակից ընկերոջ՝ Արամ Մանուկյանի հետեւյալ խոսքերը. «Ոչ մի դաշինք ու զիջում, պետք է շարունակել պայքարը մինչեւ հաղթանակ: Վայ նրանց, ովքեր ստրկական հոգի ունեն, վայ նրանց, ովքեր զիջումներով պայմանի են պատրաստվում, եւ վայ այն ղեկավարներին, որոնք իրենց հուսահատ տրամադրությամբ ու ստրկացման տանող ձեռնարկներով դավաճանում են հայ ժողովրդին»:

Վախկոտներն ու դասալիքները թող չկնճռոտեն հայրենիքը պաշտպանողների անբիծ ճակատը

ՀՅ Դաշնակցության Արցախի երիտասարդական միության անունից ելույթ ունեցավ ՀՅԴ Արցախի երիտասարդական միության Կենտրոնական վարչության անդամ Տիրուհի Գասպարյանը.

«ԱՀ մեծարգո նախագահներ, հարգարժան հոգեւոր եւ պետական այրեր, սիրելի կուսակցական ընկերներ եւ հրավիրյալներ, ողջունում ենք ձեզ Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման 105-ամյակին նվիրված տոնական համերգին: Ինչպես մեզ համար այս դժվարին օրերին, այնպես էլ 1918թ. այս օրերին մեր ժողովուրդը կանգնած էր ճակատագրական լինել-չլինելու խնդրի առջեւ: Առաջնորդվելով ՀՅԴ սերմանած ազատ, անկախ եւ միացյալ Հայաստան ունենալու գաղափարով՝ նույն գաղափարի քուրաներում կոփված հայորդիների անմնացորդ նվիրումի շնորհիվ կերտվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը՝ չնայած առկա անհաղթահարելի թվացող խնդիրներին: Սարդարապատի, Ղարաքիլիսայի եւ Բաշ-Ապարանի հերոսամարտերից ոգեշնչված եւ շարունակելով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մեկդարյա ուղին՝ հաղթեցինք Արցախյան առաջին պատերազմում, որը պսակվեց ազատ ու անկախ Արցախ, Հայաստանի երրորդ հանրապետություն ունենալու պատվով: Մայիսյան հաղթանակների երաշխիքներից գլխավորը անձնվեր ղեկավարությունն էր՝ ինչպես պատերազմի դաշտում, այնպես էլ հասարակության մեջ:

Մեր անկախությունն ու պետականությունը մեզ ոչ ոք չի նվիրել: Մենք դրա համար վճարել ենք այնքան, որքան թերեւս ոչ ոք չի վճարել: Մենք դա արել ենք միայնակ, համախմբված՝ ի հեճուկս ճակատագրի հարվածների: Ինչպես հայ ժողովրդի մղած բոլոր պատերազմներում, այնպես էլ Սարդարապատի ճակատամարտում, իրենց ուրույն դերն են ունեցել արցախցիները, որոնցից Արցախի Նախիջեւանիկ գյուղից Դանիել Բեկ-Փիրումյանի անմիջական ջանքերով հնարավոր եղավ կազմակերպել Սարդարապատի ռազմաճակատի գիծը եւ արժանի հակահարված տալ թուրք զավթիչներին: Մայիսի 28-ը հայ ժողովրդի հավաքական լինելիության երաշխավորն է, այսօր ամբողջական հայրենիք ու պետականություն ունենալու, արժանապատիվ ապրելու առհավատչյան Արցախում: Այլ ելք չունենք. միասին մենք պետք է կերտենք նոր արշալույս, այնպես, ինչպես մեր պապերը կերտեցին մայիս 28-ի արշալույսը: Միասին կհաղթենք այնպես, ինչպես հաղթել ենք մայիսյան հերոսամարտերում: Միասին կհաղթահարենք բոլոր դժվարություններն այնպես, ինչպես հաղթահարեցինք այդ օրերի դժվարությունները: Շրջափակման մեջ գտնվող Արցախից ամեն օր հիշում եւ կրկնում ենք Արամ Մանուկյանի խոսքերը՝ «Թող համոզվեն ու ըմբռնեն ազգերի դեմոկրատիաները, ինքնորոշման սկզբունք հայտարարողներն ու ընկերվարական տեսակետներ ճառողները, որ դեռեւս սուրն է միմիայն այս երկրի վրա իրավունք որոշողը: Թող յուրաքանչյուր հայ իր զենքը ձեռքին դիմի ռազմաբեմը, իսկ վախկոտներն ու դասալիքները թող չկնճռոտեն հայրենիքը պաշտպանողների անբիծ ճակատը: Շարժվի՛ր, հայ ժողովուրդ, դու որոշած ես չչքանալ այս աշխարհից, դիմիր դեպի քո փառքի ու անկումիդ որոշող մարտադաշտը, բայց այս անգամ՝ ՎԱՀԱՆՈՎ, ԿԱՄ ՎԱՀԱՆԻ ՎՐԱ»: Արամ Մանուկյանի գաղափարական շնչով նվիրյալների սխրանքներին մենք ականատես եղանք արցախյան բոլոր պատերազմներում: Նոր սերունդը ցույց տվեց, որ տերն է իր երկրի: Պետք է զինվենք այդ սերնդի գաղափարախոսությամբ, հավատանք մեր ուժերին ու փրկենք մեր հայրենիքը կործանումից: Գլուխ ենք խոնարհում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ճանապարհին անմահացած մեր բոլոր հայորդիների անմար հիշատակի առջեւ: Հավերժ փա՛ռք ձեզ: Կեցցե՛ պայքարող ժողովուրդը, կեցցե՛ Արցախի Հանրապետությունը, կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը»:

Արցախի համար դժվար ժամանակներում արցախցիները միշտ էլ զգացել են աշխարհի տարբեր երկրներում գտնվող մեր հայրենակիցների, այդ թվում՝ երիտասարդների անվերապահ աջակցությունը: Նրանցից շատերը եղել են պայքարի տարբեր ճակատներում, առաջնագծում՝ չխնայելով սեփական կյանքը: Ներկաներին իրենց շնորհավորական խոսքն են փոխանցել նաեւ ՀՅԴ աշխարհասփյուռ երիտասարդական եւ ուսանողական 14 միություններ:

Համերգային ծրագիրը շարունակվել է Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի սաների, «Արցախի ձայներ»-ի, «Մենք ենք մեր սարերը» երգի-պարի պետական համույթի, Արցախի պարի պետական համույթի, Ստեփանակերտի, Շուշիի ՄՊՍԿ սաների, «Վելանս» խմբի, ԱՀ վաստակավոր երգչուհի Տաթեւիկ Բալայանի կատարումներով: Արցախի շրջափակման պատճառով համերգին իրենց առցանց մասնակցությունն են ունեցել նաեւ երգիչներ Գառնիկ Սարգսյանը՝ ԱՄՆ-ից, Հարութ Լափաճյանը՝ Ֆրանսիայից ու Սուրեն Աճեմյանը՝ Սիրիայից:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ն. Փաշինյանի ցանկացած հայտարարություն եւ դրա հիման վրա կազմված որեւէ փաստաթուղթ մեզ համար անընդունելի է

2023 թվականի մայիսի 22-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստին պատգամավորական հայտարարությամբ հանդես են եկել ԱՀ ԱԺ «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցության պատգամավոր Աշոտ Դանիելյանը, «Միասնական հայրենիք» խմբակցության պատգամավոր Մարսել Պետրոսյանը, «Արդարություն» խմբակցության պատգամավոր Մետաքսե Հակոբյանը, «Արցախի ժողովրդավարական կուսակցություն խմբակցության պատգամավոր Գեղամ Ստեփանյանը:

Կապիտուլյանտն իրավունք չունի ստորագրել որեւէ փաստաթղթի տակ, որտեղ Արցախը կճանաչվի Ադրբեջանի մաս. Աշոտ Դանիելյան

«Մեծարգո՛ ԱԺ նախագահ, հարգելի՛ գործընկերներ,

Ընդհանրապես ԼՂ հակամարտությունը առանձին Արցախի հարց չէ: Սա Միասնական Հայաստանի եւ ընդհանրապես Հայաստանի մնալու հարցն է:

Հայաստանի Հանրապետության վարչապետի աթոռը զբաղեցնող կապիտուլյանտը ամեն մի հանդիպման՝ աշխարհագրական որեւէ վայրում, դա կլինի Պրահայում, Բրյուսելում կամ այլուր, խորացնում է Արցախի հանձնման գործընթացը:

Կարծում եմ, որ հայ ժողովուրդն ունի բոլոր տեսակի իրավունքները՝ կապիտուլյանտին հետ պահելու այդ քայլերից: Հայ ժողովրդի ներդրումը Արցախյան շարժման եւ ընդհանրապես ազատագրական պայքարում մեծ է եւ անգնահատելի:

Հայաստանի Հանրապետության որեւէ իշխանություն չի ճանաչել Արցախը Ադրբեջանի մաս եւ նման տեսակետներ ու մոտեցումներ չի ունեցել, ինչպես այս ազգակործան պատուհասը:

Հայաստանի Հանրապետությունում 2018թ. հեղափոխությունից հետո ՀՀ իշխանությունները հայտարարում էին, թե Արցախը Հայաստան է, եւ վերջ, որը բերեց բանակցությունների տապալման կամ փակուղի տարավ, հետո՝ պատերազմ:

Պատերազմից հետո Հայաստանի իշխանությունները հրապարակային ելույթներում խուսափում էին նման հայտարարություններից, հիմա ասում են, որ Արցախը ճանաչում են Ադրբեջանի մաս:

Նախ պետք է նշեմ, որ կապիտուլյանտն իրավունք չունի ստորագրելու որեւէ փաստաթղթի տակ, որտեղ Արցախը կճանաչվի Ադրբեջանի մաս: Առաջին՝ այդ փաստաթուղթը կհակասի ՀՀ Սահմանադրությանը եւ 1992թ. Գերագույն խորհրդի ընդունած որոշմանը:

Այսօր նժարին դրված է Արցախի ժողովրդի ֆիզիկական գոյության հարցը, եւ մեր ճակատագիրը որոշել՝ որեւէ մեկին չի տրվել եւ չի տրվելու:

Կապիտուլյանտի՛ իր իսկ կառավարության ծրագրում ԼՂ հարցով կա դրույթ, ըստ որի՝ հետամուտ պետք է լինի Արցախի ինքնորոշման իրացմանը, որի իրավունքն ունի Արցախի Հանրապետության ժողովուրդը:

Եթե ազգակործան պատուհասը ստորագրեց որեւէ փաստաթուղթ, որտեղ Արցախը ճանաչվում է Ադրբեջանի մաս, դա պետական դավաճանություն է»:

Եթե ոմանց թվում է, թե ԼՂ-ն իրենց սեփական կալվածքն է, ցանկության դեպքում ում ուզենան կարող են փոխանցել, չարաչար սխալվում են. Մարսել Պետրոսյան

«ԱԺ մեծարգո՛ նախագահ, հարգելի՛ գործընկերներ,

Մենք արդեն կորցրել ենք այն թիվը, թե այս 2,5 տարիների ընթացքում քանի անգամ ենք հանդես եկել հայտարարությամբ, եւ ըստ էության՝ ձայն բարբառո հանապատի եւ ոչ մի արդյունք:

Ավելի ցավալի է այն հանգամանքը, որ Հայաստանի ներկայիս իշխանության մի խումբ ներկայացուցիչներ մեր հայտարարությունները համարում են միջամտություն Հայաստանի ներքին գործերին:

Ես կուզեի այս ամբիոնից ասել, որ ԼՂ-ն երբեք չի միջամտել ՀՀ ներքին գործերին ո՛չ նախկինում, ո՛չ երեկ, ոչ էլ այսօր, որովհետեւ ԼՂ-ն սովորական տարածք չէ, ԼՂ-ն երկիր է, հայրենիք է, օջախ է: Եվ եթե ոմանց թվում է, թե ԼՂ-ն իրենց սեփական կալվածքն է, ու ցանկության դեպքում ում ուզենան, կարող են փոխանցել, չարաչար սխալվում են:

ԼՂ ողջ պատմությունը հագեցված է պայքարով. այդ պայքարը վաղուց է, այդ պայքարը շարունակվում է նաեւ այսօր: Փաստորեն, այսօր մենք մեր ուսերին կրում ենք այն ծանրությունը, որ պատմությունն առաջադրել է մեզ բոլորիս: «Միասնական հայրենիք» խմբակցությունը պայքարել է, պայքարում է եւ պայքարելու է ԼՂ-ում տեղի ունեցած հանրաքվեի արդյունքներն իրականացնելու, կենսագործելու համար: Մենք ոչինչ չենք խնայելու այդ նպատակին հասնելու համար՝ անկախ նրանից, թե ովքեր, որտեղ, ինչպես են մտածում, ինչ վերաբերմունք, տեսակետ, կարծիք ունեն ԼՂ-ի եւ նրա ժողովրդի հանդեպ:

Ես ավելի քան համոզված եմ, որ ամեն ինչ չէ, որ կորած է: Մենք կարող ենք սկսել այդ պայքարը նորից եւ այն պսակել հաջողությամբ՝ ի լուր աշխարհի ներկայացնելով մեր խառնվածքը, մեր բնակչությունը, մեր հաստատակամությունը, որ մենք մտադիր ենք այս տարածքում ապրել, ստեղծագործել, կառուցել, եւ դա մենք անելու ենք՝ ի հեճուկս մեր բոլոր թշնամիների՝ լինեն հարազատ հակառակորդներ, թե իրական»:

Ով Արցախը տեսնում է Ադրբեջանի կազմում, նա պետական դավաճան է. Մետաքսե Հակոբյան

«Երբ 2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում Նիկոլ Փաշինյանը զավթեց իշխանությունը, ու նրա թիմակիցները հայտարարեցին, թե իրենց չակերտավոր հեղափոխությունն ավելի կարեւոր է, քան Արցախյան գոյամարտը, արդեն իսկ ակնհայտ էր՝ սկսվել է Արցախի հանձնումը:

Բնականաբար, չէին կարող սուս ու փուս իրականացնել գաղտնի պլանը, անհրաժեշտ էր պատերազմ: Թավշյա հեղափոխականները չխորշեցին, եւ զոհասեղանին դնելով հազարավոր մատաղ կյանքեր՝ իրագործեցին իրենց հայակործան պլանի մի մասը: Պլանն ավարտին հասցնելու համար պիտի վստահության քվե շոու կազմակերպեին եւ ձեռք բերեին երկաթե մուրճ, որը հենց պիտի իջներ հայկականության գլխին:

Հատկանշական է, որ այդ խմբի նախընտրական ծրագրի հիմնական դրույթներից մեկը Արցախի Հանրապետության անջատումն էր՝ հանուն փրկության, որն այսօրվա ասուլիսում Նիկոլ Փաշինյանը ջանք ու եռանդ չխնայելով համոզում էր, որ այն, ըստ իրենց, կեղծ է ու անիրագործելի: Եվ այսօր այդ խմբակը հայտարարում է, որ ճանաչում է Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը՝ հատուկ նշելով 86 600 քառ. կմ-ը, որպեսզի Ալիեւին հավաստիացնի, որ ինքը հավատարիմ է եւ չի շեղվում Արցախը հանձնելու պլանավորած գործընթացից: Սակայն, Նիկոլ Փաշինյանն այստեղ վրիպում է: Արցախը հայկական է, ունի դարերով կերտած պատմություն, այնտեղ են հայկական խորը արմատները: Ողջ պատմության ընթացքում պատվավոր հայերը արյունով են պահել, պահպանել, սրբացրել ու փոխանցել ինձ, ձեզ, մեզ՝ 10 մլն. հայերիս, եւ Արցախը շարունակում է իր հայկականությունը՝ այստեղ ապրող 120 000 հայերով:

Փաշինյանին միայն թվում է, թե նման հակահայ հայտարարություններով կամ դավաճանաբար փաստաթղթեր ստորագրելով կարող է Արցախը հանձնել Ադրբեջանին: Արցախի Հանրապետության սահմանները արյունով են գծված, իսկ արյան հիշողությունն անջնջելի է:

Հասկանալի է ու պարզից էլ պարզ, որ Նիկոլ Փաշինյանը կանգ չի առնելու եւ փորձելու է փլուզել մեր միասնականությունը, մեր պետական ինստիտուտները, մեր անվտանգային համակարգը, ուստի Արցախի Հանրապետության իշխանություններից պահանջում եմ վերանայել եւ փոխել իրենց վարքագիծը, ամեն գնով ամրապնդել եւ պահպանել բոլոր պետական ինստիտուտները, այլ ոչ թե ինչ-ինչ խորհուրդներ, հանձնաժողովներ ու կոմիտեներ ստեղծելով խարխլել պետական ինստիտուտների հիմքերը՝ դրանով ջուր լցնելով Նիկոլի ջրաղացին:

Արցախը դարեր շարունակ դիմակայել է բազմաթիվ գոյաբանական փորձությունների. վստահ եմ՝ կդիմակայի Նիկոլին եւս:

Եվ վերջում ուզում եմ հիշեցնել 2022թ. ապրիլի 14-ին այս բարձրադիր ամբիոնից արածս հայտարարությունը. «Ով Արցախը տեսնում է Ադրբեջանի կազմում, նա պետական դավաճան է»:

Մի՛ թողեք, որ վաղը պատմության աղբարկղ նետվելիք այսօրվա իշխանությունները փակեն հայ ժողովրդի պատմության վերջին էջը. Գեղամ Ստեփանյան

«Հարգելի՛ հայրենակիցներ Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում,

Արդեն որերորդ անգամ Արցախի խորհրդարանը արտահերթ ռեժիմով հավաքվում է՝ արտահայտելու Արցախի ժողովրդի կամքը, վերահաստատելու Արցախի դիրքորոշումն ու պահանջը՝ ինքնորոշման իրավունքից չշեղվելու մասով: Հավաքվում ենք՝ ոչ թե Ադրբեջանի կամ միջազգային հանրության ոչ հայանպաստ հայտարարություններին արձագանքելու, այլ, ցավալիորեն, մայր հայրենիքի իշխանությունների՝ մեզ թիրախավորված կործանման տանող հայտարարություններին պատասխանելու:

Ընդամենը մի քանի տարի առաջ անգամ ամենավատ երազում չէինք կարող պատկերացնել, որ Արցախի խորհրդարանը ստիպված է լինելու գրեթե ամեն ամիս իր հայտարարություններով փորձել զսպել Արցախը Ադրբեջանի կազմում դիտարկող հայաստանյան իշխանությունների հայտարարություններին եւ դրա գործնական իրականացմանը միտված քայլերին: Սա մղձավանջ է, ոչինչ ավելին:

Սկզբից հայտարարվեց նշածողն իջեցնելու մասին, հետո հայտարարվեց, որ Տեղ գյուղից այն կողմ Ադրբեջան է, հետո ինքնորոշման իրավունքից նահանջ կատարվեց դեպի իրավունքների ու անվտանգության մասին անհասկանալի ու անորոշ ձեւակերպումներ, իսկ այսօր Հայաստանի իշխանությունները բացահայտ հայտարարում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունն ընդունելու մասին՝ 86 600 քառ. կմ տարածքով, ներառյալ՝ Արցախը:

Հայաստանի իշխանությունների՝ 5 տարի շարունակվող քաղաքական աճպարարություններն ու մանիպուլիացիաները, սեփական ապիկարությունն ու անհեռատես քայլերը միջազգային հանրության կամ նախկինների վրա բարդելու չվերջացող զառանցանքները մեզ ամեն օր տանում են դեպի կործանարար հետեւանքների: Հիմա էլ ասում են՝ հասել ենք, իջե՛ք. հասել ենք:

Սիրելի՛ քույրեր ու եղբայրներ Հայաստանում եւ Սփյուռքում, օրհասական վիճակում գտնվող Արցախը փրկելու որդեգրած ուղուց շեղված Հայաստանի իշխանություններին ուղղված մեր կոչերն ու հորդորները միտումնավոր եւ դիտավորյալ կերպով որակվում են անհասկանալի. էլ ինչպե՞ս ասենք, որ հասկանան:

Հայաստանի իշխանությունների նպատակն ու գործողությունները այլեւս պարզից էլ պարզ են, իսկ դո՞ւք, սիրելի՛ հայրենակիցներ, դուք ինչպե՞ս եք ապրելու հայրենիքը կորցրածի եւ 120 000 հայրենակիցների բախտի քմահաճույքին հանձնածի խարանով, ինչպե՞ս եք հաղթահարելու պատմության առաջ ձեր անտարբերության ու անգործության համար, ինչպե՞ս:

Ամեն ինչ չափ ու սահման ունի, իսկ սահմաններն արդեն հատվել են վաղուց: Դուք արդեն իսկ պետք է հասկանայիք, որ «Արցախը տանք ու պրծնենք» կեղծ ու շինծու թեզը այսօր հասել է Սյունիքին, Գեղարքունիքին, Տավուշին, Վայոց ձորին, վաղը հասնելու է ձեր տուն՝ խոստանալով՝ ապագա կա: Դուք պետք է հասկանայիք, որ մեր տունը քանդողը պարտվողականությունն է, այդ պարտվողականությունն արդարացնելու համար ամեն անգամ թվացյալ անկեղծությամբ հորինվող նոր ստերը: Այո՛, սահմանները հատվել են, երբ թիրախավորվում է Հայ Առաքելական եկեղեցին, երբ բռնի ուժի են ենթարկվում կամ կալանավորվում մեր սուրբ նահատակների ծնողները, երբ ստիպում են մոռանալ Արարատը՝ փոխարենը մտածելով Արագածի մասին, երբ ցեղասպանության վրիժառուներին նվիրված կոթողի կանգնեցումը համարվում է սխալ որոշում ու նմանատիպ բազմաթիվ կարմիր գծերի հատում:

Հարգելի՛ հայրենակիցներ, ընդունե՛ք այս խոսքերը որպես արցախահայերի որդիական աղերսանք: Ամեն գնով կանգնեցրեք պատմության կործանարար ընթացքը, հակազդե՛ք Արցախի վերջնական կորստին տանող հայաստանյան իշխանությունների գործողություններին, մի՛ թողեք, որ վաղը պատմության աղբարկղ նետվելիք այսօրվա իշխանությունները փակեն հայ ժողովրդի պատմության վերջին էջը»:

Հայտարարվել է «Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ» հանրային շարժման կազմավորման մասին

Մայիսի 18-ին հրավիրվել է մամուլի ասուլիս՝ «Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ» հանրային շարժման կազմավորման մասին հանրությանն իրազեկելու նպատակով:

Հանրային շարժման նախաձեռնող խմբի անդամներ Ռուբեն Վարդանյանը, Զոյա Սարգսյանը, Կարեն Բազյանը, Դավիթ Մանուկյանը, Դավիթ Բաղրյանը եւ Նարինե Աղաբալյանը խոսել են նախաձեռնության մասին ու պատասխանել լրագրողների հարցերին:

Իր խոսքում Նարինե Աղաբալյանը նշել է, որ նախաձեռնությանը միացել է՝ գիտակցելով պահի լրջությունը, հայրենիքը կորցնելու սպառնալիքը եւ իր անձնական պատասխանատվությունը հայրենիքի հանդեպ:

Շարժման համակարգող Ռուբեն Վարդանյանը տեղեկացրել է, որ Արցախի ապագան ինքնուրույն որոշելու գաղափարի շուրջ միավորվել են տարբեր տարիքի, տարբեր ճանապարհ անցած, տարբեր փորձով մարդիկ, որը գաղափարի շուրջ միավորման կարեւոր օրինակ է: «Մենք պատասխանատու ենք մեր ապագայի համար: Առաջին կարեւոր քայլն այն էր, որ կարողացանք իրար աչքերի մեջ նայելով խոսել անցյալի մասին, խոսել գաղափարի մասին: Առանց գաղափարի գործողություններ անելը շատ վտանգավոր է: Ուրախ եմ, որ բոլորս միավորվել ենք նպատակի եւ գաղափարի շուրջ, կարողացել ենք անձնական, կուսակցական տարբեր շահերը թողնել մի կողմ եւ իրար լսել, ձեւավորել ընդհանուր ճակատ, որն ամեն ինչ անելու է, որ Արցախը լինի անվտանգ, հայկական եւ ազատ»,- ասել է Ռ. Վարդանյանը՝ վստահություն հայտնելով, որ շարժմանը կմիանան հազարավոր մարդիկ Արցախում, Հայաստանում եւ հայկական աշխարհում:

Նա ասել է, որ «Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատի» շրջանակում կազմվել է ծավալուն փաստաթուղթ, որը ներառում է աշխատանքային քարտեզ ու 77 կետ:

Վարդանյանի խոսքով՝ անցել է կիսաքայլերի, կիսատ գործողությունների ժամանակը, եւ միավորվելով պետք է ցույց տալ, որ պատրաստ են մինչեւ վերջ գնալու՝ հանուն իրենց հայրենիքի:

Շարժման նախաձեռնողներից Դավիթ Մանուկյանը նշել է, որ ապրելով Արցախում՝ երբեւիցե չի պատկերացրել, որ կընդգրկվի շարժման գործընթացի մեջ, որը կպարունակի քաղաքական, հասարակական ենթատեքստ, որովհետեւ ունեցել է նեղ կոնկրետ մասնագիտություն: «Այս գործընթացը պարտադրված է Ադրբեջանի իշխանության, Հայաստանի իշխանության կողմից վարվող հակաարցախյան քաղաքականությամբ, ինչու չէ՝ նաեւ Արցախում փոքր խմորումներով: Այս ճակատի հայեցակարգը, գործելակերպն իրականացրել են մարդիկ, կուսակցություններ, հասարակական կառույցներ, անհատներ, որոնք իրենց աշխատանքի արդյունքում ձեւավորել են այն տեսլականը, ծրագրերը, որոնք պետք է համատեղ իրականացնենք: Պայքարը չի ենթադրում միայն քաղաքական ոլորտը, այլեւ տնտեսական, անվտանգային համակարգի հետ առնչվող հայեցակագ ունի: Հուսով եմ՝ այն մարդիկ, որոնց հետ առիթ ենք ունեցել հանուն Արցախի Հանրապետության պայքարելու, կվստահեն մեր խոսքին, մեր անցած ճանապարհին եւ կմիանան այս գործընթացին, որն ուղղված չէ ինչ-որ մեկի դեմ, այլ հանուն Արցախի է»,- ասել է նա:

«Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ» հանրային շարժման հռչակագրում նշվում է, որ այն համաժողովրդական շարժման ձեւաչափով ԱԶԱՏ, ԱՆՎՏԱՆԳ, ԵՐՋԱՆԻԿ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՑԱԽ գաղափար-նպատակի շուրջ կամավոր հիմունքներով միավորում է, որում ներգրավված են քաղաքական ուժեր, հասարակական կազմակերպություններ եւ անհատ քաղաքացիներ:

Արցախը հայկական պահելու, նրա ամբողջականությունն ու սուբյեկտայնությունն ապահովելու գերխնդրի իրագործման համար Շարժումն իր առջեւ նպատակ է դրել համախմբել հայության բոլոր հատվածներին եւ, առաջին հերթին, Արցախի հանրային, քաղաքական, մտավորական, մասնագիտական եւ այլ շրջանակների:

«Նման իրավիճակում մենք իրավունք չունենք անտարբեր հետեւելու եւ դիտորդի դերում մնալու: Պահն օրհասական է եւ իր երկրի ճակատագրով մտահոգ յուրաքանչյուր հայորդուց, Արցախի հանդեպ համակրանք ունեցող ամեն մի բարեկամից պահանջում է հայրենասիրական մղումները, կարողություններն ու նվիրումի պատրաստակամությունն ուղղել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի համար պայքարին՝ բոլոր հնարավոր միջոցներով:

Մեր նախնիներից ստացած հարազատ ու ծաղկուն Արցախը հայկական պահելու սուրբ նպատակի համար մենք, հրաժարվելով նեղ անձնական շահերից, վեր կանգնելով կուսակցական, պաշտոնական դիրքերից, հռչակում ենք «Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ» հանրային շարժումը՝ որպես համախմբման ու միասնաբար պայքարելու կամքի եւ վճռականության դրսեւորում:

Բոլոր նրանք, ովքեր ընդունում են մեր կողմից հայտարարված գաղափար-նպատակը, ովքեր գիտակցում են իրենց պատասխանատվությունը Հայրենիքի հանդեպ, ում համար թանկ են հայկական արմատներն եւ

մեր երեխաների ապագան՝ կարող են միանալ մեզ՝ անդամակցելով հանրային շարժմանը եւ ուժեղացնելով Արցախի անվտանգության ու զարգացման ճակատը»,- ասվում է տարածված հռչակագրում:

Արցախի ապագան չի կարող որոշվել մի խմբի կողմից, որը հիմա կառավարում է երկիրը

Արցախի ապագան չի կարող որոշվել մի խմբի կողմից, որը հիմա կառավարում է երկիրը, որովհետեւ սա ոչ թե կուսակցական կամ կառավարման խնդիր է, այլ՝ սկզբունքային հարց: Այս մասին մայիսի 18-ին հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ նշել է ԱՀ նախկին պետական նախարար Ռուբեն Վարդանյանը՝ պատասխանելով ԱՀ բոլոր եւ ՀՀ մի շարք քաղաքական ուժերի համատեղ հայտարարության մասին «Ապառաժ»-ի հարցին:

Հայտարարության մեջ նշվում էր, որ ցանկացած բանակցային բովանդակություն, ըստ որի՝ Հայաստանի իշխանությունները համաձայնելու են, որ Արցախը լինի Ադրբեջանի կազմում՝ անտեսելով ինքնորոշման իրավունքը, զուրկ է օրինական հիմքից:

«Ես ողջունում եմ այդ դիրքորոշումը: Հայաստանի կառավարությունը պետք է հասկանա, որ ժողովուրդն իր կարծիքը հայտնելու է ոչ միայն ընտրությունների ժամանակ ձայն տալով: Սա հայկական աշխարհի կարեւոր հարցերից մեկն է»,- նշել է Ռ. Վարդանյանը:

Նրա խոսքով, հայտարարություններից բացի՝ պետք է պարզ ու հասկանալի քայլեր լինեն: «Պետք է հստակ լինի՝ ինչ է նշանակում պայքարել, չընդունել, չհամաձայնել Հայաստանի կառավարության դիրքորոշման հետ: Մյուս քայլերն էլ պետք է ներկայացվեն հասարակությանը: Հայաստանում եւ հայկական աշխարհում մարդիկ պետք է զգան, որ Արցախի հարցը փակված չէ: Արցախում էլ չենք համաձայնելու Ադրբեջանի, Հայաստանի կառավարության քայլերի հետ, որովհետեւ դա անընդունելի է Արցախի ժողովրդի եւ Հայաստանում ապրող հայերի, հայկական աշխարհի համար»,- ասել է Ռուբեն Վարդանյանը:

Եթե կարողանանք ակտիվ գործունեություն ծավալել ժողովրդի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, ապա կարող ենք լայն զանգվածներ համախմբել այդ գաղափարի շուրջ

«Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ» հանրային շարժման անդամներից Սերգեյ Շահվերդյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում, անդրադառնալով 1988-ի իրավիճակին, նշում է, որ այն ժամանակ ժողովրդին միավորեց միացման գաղափարը: «Այսօր մենք չունենք այդպիսի միասնական գաղափար, որը բոլորը կարող են կիսել: Բայց մենք ունենք ցեղասպանվելու գոյաբանական վտանգ, եւ այդ գաղափարների շուրջ համախմբումը փաստացի նաեւ ցեղասպանությունից փրկվելու գաղափարի շուրջ համախմբում է նշանակում:

Վստահ եմ, որ եթե կարողանանք ակտիվ գործունեություն ծավալել երկրի փրկության, ժողովրդի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, ապա կարող ենք շատ լայն զանգվածներ համախմբել այդ գաղափարի շուրջ»,- ասում է նա:

Տիրող անտարբերությունը, ըստ մեր զրուցակցի, նաեւ մեր դեմ մղվող բազմատեսակ հիբրիդային պատերազմի արդյունք է, որը չկար 1990-ականներին. «Հասարակության համար շատ դժվար է բազմակողմանի հիբրիդային պատերազմի ժամանակ արագ կողմնորոշվել: Ճակատի նպատակներից մեկն էլ հիբրիդային պատերազմին հակազդելն է: 1988թ. հաջողել ենք, քանի որ ձգտումը բնական էր եւ կային ուժեղ առաջնորդներ, միանգամից շարժումը պոռթկաց, հիմա ամենամեծ խոչընդոտը հասարակության անտարբերությունն է, ապատիան: Մարդիկ ապրում են սովորական կյանքով՝ չգիտակցելով, որ այսպես շարունակելու դեպքում մեզ սպասում է էթնիկ զտում, բայց ոչ մեկը ոչ մի միջոց չի ուզում ձեռնարկել փրկելու համար գոնե այն, ինչ հնարավոր է»:

Սերգեյ Շահվերդյանի կարծիքով՝ հասարակության ակտիվությունը նվազել է, որի պատճառով առաջնորդողներ չկան: «Առաջնորդները ծնվում են տեղերում՝ հասարակության ակտիվության արդյունքում: Ցավոք, ունենք այնպիսի իրավիճակ, երբ ժողովուրդը մի տեսակ ապատիայի մեջ է ընկել, անընդհատ փոփոխվող իրավիճակը, ամեն կողմից տարբեր բնույթի հայտարարությունները մարդկանց անտարբեր վիճակի մեջ են գցել: Վստահ եմ, որ որոշակի ակտիվություն ցուցաբերելու արդյունքում տեղերում կունենանք առաջնորդներ, իսկ ճակատն արդեն ունի առաջնորդ»,- նշում է նա:

Ճանապարհային քարտեզների վերաբերյալ աշխատանքներն սկսվել են

Ճակատի նախաձեռնող խմբի անդամներից Գրիգորի Մարտիրոսյանի խոսքով՝ աշխատանքների արդյունքում կազմվել է 77 կետից բաղկացած փաստաթուղթ, որը ներառում է հիմնական մարտահրավերները, պայքարի տեսակները, հիբրիդային պատերազմի ուղղությունները, կարմիր գծերը: Ըստ նրա՝ յուրաքանչյուրի համար պետք է ձեւավորվեն կոնկրետ գործողությունների ծրագիր, ճանապարհային քարտեզներ: «Ճանապարհային քարտեզում կնշվեն նպատակը, դրան հասնելու քայլերը, օգտագործվող ռեսուրսները եւ ժամկետները:

Բավականին մեծ աշխատանք է սպասվում, որում կներգրավվեն պետական եւ մասնավոր հատվածի տարբեր ոլորտների մասնագետներ: Ճանապարհային քարտեզների վերաբերյալ մեր աշխատանքներն սկսվել են. ովքեր գտնում են, որ կարող են օգտակար լինել այդ աշխատանքներին, հրավիրում են միանալ»,- հասարակության տարբեր խավերի հետ հանդիպմանը նշել է ԱՀ նախկին պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանը:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

**Խմբագիր
Ա. Պուլուզյան**